

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի... Առանձին համարները 7 կոպեկով...

Թիֆլիսում գրվում են միմյանիստ խմբագրատան մէջ...

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ»... կամ Tiflis. Rédaction «Mschak»...

Մ Շ Ա Կ

Հ Ի Մ Ե Ա Գ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ՆԵՐԿԱՅ 1895 ԹԻՒՆՎԱՐԻ

Մ Շ Ա Կ

23-ՐԿ ՏԱՐԻ

23-ՐԿ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՈՒՄ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն գիրքով, նոյն պրոզոգրամայով և նոյն ուղղությամբ...

Մշակի տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մեկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եթե ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., մի ամսվանը՝ 1 ռուբլի:

Մշակի գրվել կարելի է ՌԻՍՏԱՎԱՐԱՆԸ (Բաղարայան և Բարոնյան փողոցների անկիւնը) և կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակի» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելու, պէտք է գիտնի հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK»:

ԲՈՎԱՆԻՍՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Մամուլի կարծիքը հայոց հարցի մասին. Պօլեմիկա դատաստանական ընթացիկների առթիվ... Վրացի հարցը. ՆԱՐԻՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Արտաքին գործերի մինիստր Գիբու. Նամակ վերին Ազգ. Կոմիտեի. Ներքին լուրեր. ԱՍՏԱՎԱՐԱՆԸ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Նամակ Թիֆլիսից. Նամակ Բուխարայից. Վերին Ազգ. Կոմիտեի. ՏԱՅՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գաղթականներ.

ՄՍՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅՈՑ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Կ. Պօլսից հեռագրում են «Standard» լրագրին. «Գլխադատ»-ի ձառը, որ նա ասաց հայոց պատգամաւորութեանը, մեծ տրպանություն թողնել իրիկ-կիսիկում: Այդ ձառը հեռագրական համառոտութեանը, որը հասել էր Կ. Պօլսի, փոքր ինչ թերի էր սուլթանի անհամբերութիւնը այնքան մեծ էր, որ փոխանակ մի կամ երկու օր սպասելու 1 ժողովի լրագրիներին, հրամայեց հեռագրել 1 ժողովի թերեւս զեպանին, որ նա հեռագրի ամբողջ ձառը: Սուլթանը ասածիկ զայրացած է և թշնամութիւնը գէպի Անգլիան նրա մէջ աւելի զորեղացել է:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Գ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն Ն Ե Ր

Աստուած իմ, գոչեց աղջիկը, այդ ինչ արիւր Պետրոս: — Ինչ որ պէտք էր, ասաց նա — գրկիւր վիզս և հանգիստ կաց... լաւ, այդպէս: Նազնիկը գրկեց իր նշանածի վիզը և մի ջերմ համբուր դրոշմեց նրա վրա: — Որքան բարի ես, ասաց նա: — Բարի, ասաց Պետրոսը — սիրում եմ քեզ, և քրդի ձեռքում կեմ թողնի: Երկիրը աւելի և աւելի մթնանում էր: Աղջիկը խիստ յոգնած էր և անագին ծանրութիւն էր երիտասարդի վզի վրա: Նա այդ զգում էր, որովհետև Պետրոսն էլ շուտով սկսեց յոգնել, քրդիկը վրա տուեց, տաքացաւ նա, հնալ ըսկեց ծանրութեան տակ, դանդաղեցրեց քայլերը: — Ինչեմ, ասաց Նազնիկը: — Ո՛չ, ո՛չ, դեռ քայլել չես կարող: Բաւական գնաց այդպէս. երբեմն կանգ էր առնում և ետ նայում: Այժմ հեռվում սկսվում էր նշմարվել շարժում մի մեծ կէտ. մի քանի քրդեր էին, որ վազում էին: Պետրոսին տիրում էր յուսահատութիւն. չը գիտէր ինչ անել: Աղջիկը մի թազտոց էր փնտռում,

վաճակ հայերը և ոչ թէ նրանց ճշնորները: Այդպէս է թիւրքը ամեն դեպքում: Այն միջոցին, երբ նրա անաւթի և անվախել յանցանքները ամբողջ կերպով զայրոյթ են բարձրացրել նա դատի է ենթարկուած բազմաթիւ աննշմարելի մարդկանց և յետոյ հարցնում է՝ մի՞թէ՞ այդպիսի յանցանքով թշուառները արժանի են օտարների համակրութեան և պաշտպանութեան: Այդ մարդասպան կարճվածներից շատերը ապացուցել են, որ յանցանքը կատարված ժամանակ իրանք միանգամայն ուրիշ տեղ էին գտնվում, բայց ոչ մի ուշադրութիւն չեն դարձրել դրա վրա: Գլխադատը ասում է, թէ մենք պէտք է սպասուք յանձնաժողովի զեկուցմանը, և նա իրաւացի է: Բայց ինչի՞նչ է սպասում յանձնաժողովը: Ինչօ՞ք նա չէ սկսում իր դործը: Հայաստանի կառավարիչները այդ միջոցում ամեն ջանք գործ են դնում, որ կարեն փկաններին հեռացնել կից պատրուակներով և միևնոյն ժամանակ անտու՞մ են իրանց վրէժը: Հայաստանի դրութիւնը մի կերպով յանդիմանութիւն է Բերլինի դաշնագրին ստորագրող պետութիւններին:

մի ծակ, մի խոր... սակայն բացի տարածութիւնից և նրա վրա ցանկած կտոր կտոր ժայռերից ոչինչ չէր երևում: Բայց երբ աւելի ամբողջ էին դրոշմում ձիւնի վրա. այդ նրան կատաղեցնում էր: Անիծեց ձիւնը, անիծեց ձիւնը, անիծեց և շատ ուրիշ բաներ... բայց աղջիկը ծանրանում էր նրա ուսին և նրա վերջին ոյժերն էլ սպառում: Այլ ու շարունակելու հնար չը կար, ծնկները կրօնեցին. կանգ առաւ, ցած սահեցրեց բեռը և ասաց. — Կարող ես քեզ քայլել... մնչեմ որ հանգրստանամ: — Կը քայլեմ... իմ խեղճ Պետրոս, պատասխանեց Նազնիկը — ես չեմ ուզում, գիտէի որ ծանր եմ: — Լաւ, լաւ, այժմ քայլեք և շուտ: Այդ միջոցին նորից փայլեց ետեւի կողմից մի լոյս և նորից մի գնդակ ճիւղ տղը: — Այժմ աւելի մտն են, ասաց Պետրոսը — նըրանք վազում են. շտապե՛ք մեզ մի տեղ գցե՛ք: — Որտեղ, մտնաց Նազնիկը յուսահատ — չէ որ նրանք տղամարդիկ են և վազում են, իսկ ես արդէն յոգնել եմ, և յետոյ ուր թաքնվե՛ք, չէ որ մեր հեռքերը երևում են: Այդ խօսքերը իրանց ճշուութեամբ Պետրոսին էլ յուսահատութիւն աղղղեցին: Նա կանգ առաւ և նեղարտութեամբ ասաց.

Ծում են, որ իրիկ-կիսիկում ներկայումս արդէն քաղաքականութիւնը կարող է տանել դէպի հայկական նահանգների կորուստը: Վերջերս նոր խոզարկութիւն եղաւ բժշկական ուսումնարանում: Խոզարկութիւնը կատարեցին սուլթանի երկու պալատականները անձամբ: Բաւական թւում ուսանողներ բանտարկվեցին, իսկ թղթերը գրաւեցին: Պօլսը լի է լուրերով այն կառնակութիւնների մասին, որ տեղի են ունենում գաւառներում: ներքին գաւառները կող տեղեկութիւնները կառավարութիւնը բռնում է, առևտրական յարաբերութիւնները զազարել են, և համարեա ամբողջ հայկական ազգաբնակչութիւնը բանտերում է:

Կ. Պօլսից Պէտրին գործակալութեանը՝ հեռագրում են յունվարի 10-ից. «Շարժ իրիկյեան թիւրքաց զինուորները անգլիական պատաստան նամակներին բռնեցին փոքր-Վտիայից ստացված 12 նամակներով և զղկոյակապ արին մեղադրելով նրան, որ կամուրջն անցնելու վարձը կեղծ դրամով է վճարել: Նամակները խեղցին նրանից: Անգլիական պատու դիրեկտորը, միջամտելով և կամենալով արգելիլ այդ նամակների ընթերցանութիւնը, որեքը Հայաստանից ստացված էին կարճվում, ամենակապիտ վերաւորանքներին ենթարկվեց: Բրիտանական հիւպատոսը միջամտեց, և նամակներին ազատութիւն տրվեց: Բրիտանական հիւպատոսը իսկոյն բողոք ներկայացրեց:»

Անգլիական «Morning Post» լրագրին հեռագրում են Վիեննայից յունվարի 5-ից. «Կ. Պօլսից ստացած տեղեկութիւնների համեմատ, փոքր ինչ առաջ տարածված լուրը Բիթլիսի վաղի թաքսի-փաշայի ըսպանութեան մասին այլ ևս չէ ծղլվում: Թիւրք լրագրիները անցեալ օրը հրատարակել են թաքսի-փաշայից ստացած հեռագրերը, թէ Բիթլիսի վիլայեթում տիրում է կատարեալ անկարգութիւն: Կարծում են, որ թաքսի-փաշայի սպանելու լուրի տարածվելու պատճառը Սիլվանի վաղի Հելմի-բէյի մահն է: Իսկ այս վերջինը մեռել է թիւրք լրագրիների անկողի ծանր հիւանդութիւնից, որից երկար ժամանակ նա տանջվում էր: Ամերիկական «New-York Herald»

լրագրին հեռագրում են Վիեննայից. «Գործերին լաւ տեղեկ մարդիկ այստեղ կարծում են, որ եւրոպական քննիչ յանձնաժողովը, որ շուտով պիտի գնայ Հայաստան, շատ քիչ կամ ոչինչ նշանակութիւն չի ունենայ. երեւի զարնան ըսկրներում ուրիշ մասնաժողով կուղարկվի Հայաստան՝ քննութիւն անելու համար:»

ՊՈԼԵՄԻՎԱ ԳՍԱՍՏԱՆԱԿԱՆ ԲԷՅՈՐՄՆԵՐԻ ԱՌԻՔՈՎ

ԻՎ Գննիչը այժմ այն մասնաւոր կամ տէլիսիական պատճառները, որոնք «ԿԱՅԿԱՅԵ» լրագրի կարծիքով, գործնական ապէս արգելք են հանդիսանում երգուեալ դատաւորների նստախօսի հաստատութեան մեր երկրում:

Առաջին և, լրագրի կարծիքով, զիստ արգելքը — պետական ուսու լեզուի տարածված չը լինելն է մեր երկրում և իբրև դրա հետեանք՝ թարգմանների միջնորդութեան դիմելու չարքը: Այդ առարկութիւնը ինքն ըստ ինքեան ջրվում է, եթէ ի նկատի առնենք, որ այս 27 տարվայ ընթացքում ուսու լեզուի տարածումը մեր երկրում մեծ ծաւալ է ստացել և այսօր գուցէ միայն հեռու անկիւններում, հարողակցութեան միջոցներով և քաղաքներից զրկված տեղերում անձանթ լինի ուսու լեզուն: Չետեաբար, զա լուրջ արգելք չէ, այլ մասնաւոր բնաւորութիւն է կրում, և հետզհետեւ, ժամանակի ընթացքում, կարող է բոլորովին անհետանալ: Բայց ամենակապիտ փաստը որով ջրվում է այդ թարգմանների միջնորդութեան կարիքը այն է, որ օր էն քոփ ինչպէս այդ լաւ յայտնի է և ուսու լրագրին, «երգուեալ դատաւորները ընտրվում են ամեն դասակարգի տեղական բնակիչներից, որոնք գիտեն և ուսուսաց լեզուն և կարող են կարգաւ այդ լեզուն օր: Ուրեմն քանի որ օրէնքի արամադրութիւնը այդպիսի օրոշ է և քանի որ երգուեալ դատաւորները ուսուները իմացող անձնաւորութիւններ պէտք է լինեն, էլ ի՞նչ արգելքի մասին է խօսում «ԿԱՅԿԱՅԵ»-ը: Երկրորդ առարկութիւնը — մեր երկրի բարբառների շատութիւնը կամ տարբերու-

Մի րօպէ ոչ մի երջանկութիւն չէր կարող հաւասարվել նրանց երկուսի երջանկութեանը. մտացան ամեն ինչ, մտտեցող քրդերը, ձիւնը... — Օ՛, որքան, որքան սիրում եմ քեզ, մտնում էր Նազնիկը անեղային լսանքով սղմվելով երիտասարդի գրկում. — Թող գան քրդերը. եթէ չը գրկեն ինձ և տանել ուղեցին, դու սպանիր ինձ... կանես չէ, չես թողնի, որ նրանք ինձ լուին... որքան ևս կրկնի մտնել, մտնել... — Իսկ ես. ես ինչ անեմ, հարցրեց Պետրոսը — չէ որ դու ես իմ կեանքի պահպանողը, առանց քեզ ինչ անեմ: — Օ՛, իմ Պետրոս, մրմնջաց աղջիկը, — ես էլ քեզից յետոյ պարել չեմ ուզում. մեռնեք միասին, այդ աւելի լաւ է... երևում է որ մենք իբրաւունք չենք ունեցել երջանիկ լինելու... ո՛չ... Հայրս էլ յաճախ կրկնում էր, որ մեր ճակատի դրածը այն է, որ միշտ թշուառ պիտի մնանք... ինչու — չը գիտեմ: Կ՛նչու գողորը, աւաղակները աւելի լաւ ճակատագիր ունեն, քան մենք... չը գիտեմ, չը գիտեմ... դու այդ գիտես, Պետրոս ջան... — Նրա ձայնը թուլանում էր, նայելու և ինքը նա լիովին ամոխրվել — կծկվել էր երիտասարդի գրկում և աչքերն էր փակում:

— Մտտեցի... գրկիր ինձ, մրմնջում էր նա — մրտում եմ... կուտքը բաց, այդպէս... օ՛, ինչ լաւ է:

Թիւնն է: ճիշդ է, մեր երկիրը խոսում է շատ տարբեր լեզուներով և դանազան բարբառներով, բայց ամեն մի որոշ տեղում, շրջանում, նահանգում միշտ մի լեզու տիրապետող է հանդիսանում և այդպիսի տիրապետող լեզուներ մեր երկրում երեք հատ են՝ հայերէնը, վրացերէնը և թուրքերէնը (Ատրպատականի բարբառ): Վերաստանում բնակվող ազդեցիկները ամենաքշ հասկանում են վրացերէնը: Արարատեան կամ հայկական նահանգներում ապրող ժողովուրդները, քերուր, թուրք, եզդի, ասորի շատ զեղեցիկ կերպով հասկանում են հայերէնը, իսկ թուրքաբնակ տեղերի հայերը ամենահասկալի կերպով խոսում են թուրքերէնը: Եւ ինչպէս այժմ պետական դատարանի օրով պահում է թարգման տիրապետող լեզուի համար, նոյնպէս կարելի է վարվել երդուեալ դատաւորների օրով, եթէ բացառիկ դէպքեր լինեն:

Երբ որդ առարկութիւնը, որը, լրագրի կարծիքով ծանրակշիւ է, այն երկուսն է, որ չը լինի թէ դատարանը դառնայ թարգմանների և ոչ երդուեալների դատարան:

Մեր համաձայն ենք և մի քանի անգամ առիթ ենք ունեցել շեշտելու այն հանդամանքի վրա, թէ ներկայումս պետական դատարանների մէջ թարգմանների միջոցով դատաւարութիւնը մի մեծ չարք է և այդ չարքի առաջը կարելի է առնել միայն նրանով, որ դատաւորները պարտաւորապէս ծանօթ լինեն տեղական զլխաւոր լեզուներին: Արդ, երդուեալ դատաւորների օրով այդ չարքը կարող է արմատախիչ լինել, քանի որ երդուեալները լինելով տեղական լեզուներին ծանօթ անձինք, հնարաւորութիւն կունենան անմիջապէս լսել վկանների ցուցմունքները և բոլոր արժանիքներն ունենալ նրանց ներքին արժեքը և բովանդակութիւնը:

Գալով չորրորդ առարկութեան, այն է ցեղական, ազգայնական շարժառիթներին, պէտք է ասենք, որ ոչ մի ծանրակշիւ փաստով չէ ապացուցվել մինչև այժմ այն հանգամանքը, թէ տարբեր ազգերին պատկանող երդուեալները կարող են արդարութեան, ճշմարտութեան և խղճմտանքի զգացումները զոհել ցեղական, ազգայնական շարժառիթներին:

Մեր ժողովուրդը ինքն անխնայ կերպով հալածում է շարժառիթներին՝ ինչ ազդուութեան և ցեղին պատկանելի լինեն նրանք: Այդ մէկ: Նրբորդ մի է նոյն շրջանում ապրող տարբեր ցեղերը համեմաշխ և հաշտ են ապրում միմեանց հետ, իբրև զբացիներ, և միմեանց ցանկերն, ուրախութիւններին մասնակիցներ: Նրբորդ մի մոռացէք, որ դատաւորները լինելու են երդուեալ և թէ ինչ ահալի նշանակութիւն ունի ժողովուրդի համար երդումը:

Մեզ կարող են առարկել, թէ ո՞րքան շատ տարածված է սուտ վկայութիւնը և սուտ երդումը ուսուցող, մանաւանդ թուրքերի մէջ: Գրան կը պատասխանենք, երբ

դուեքեք ժողովուրդին այնպէս, ինչպէս նա դարեւրդ սովոր է երդուել, ինչպէս պահանջում են նրա գաւառութեան ծէսերը և դուք կը տեսնէք, որ սուտ վկայութիւնները զգալի կերպով արմատախիչ կը լինեն: Եթէ հարկ լինի, մենք այս կէտը փաստելով կ'ապացուցանենք:

Ինչ վերաբերում է ուսուցիչ տարածման, դրան մենք կը պատասխանենք «Կարգի» լրագրի խօսքերով, որն առարկելով «Кавказ» լրագրի արտայայտած կարծիքի դէմ, շատ իրաւացի կերպով նշկատում է, որ երդուեալ դատաւորները ընտրվում են ոչ թէ լուսաւորութիւն և զիտութիւն, ոչ թէ ուսաց լեզու տարածելու համար ժողովուրդի մէջ, այլ միայն արդարութիւնը պաշտպանելու համար դատարաններում:

Մեր վերջապետում ենք մեր յօդուածը նորից կրկնելով սենատոր Բովինսկու այն հրաւերը, որ եթէ կամենում էք իմանալ, թէ արդեօր մի ժողովուրդը հասունացած է այս կամ այն գործի համար, փորձեցէք նրան այդ գործի մէջ և ապա որոշեցէք՝ վաղաժամ է թէ ոչ: Այդ է միակ միջոցը, որ ցոյց են առաւել մեզ կենսքը և լօղիկան:

ՀԱՅՈՑ ՀԱՐՅՈՒ

Նիկոլայ Կայսրի գահ բարձրանալու օրից անց լիական պետական մարդիկ և անգլիական մամուլը սկսեցին խոսել Ռուսաստանի մասին մեծ համակրութեամբ: Ռուսաստանի հետ բարեկամութիւնը, որ դեռ նորերս կատարուեալ մեծում էր Անգլիայում, որպէս ոչ ցանկալի և վնասաւար, այժմ համարվում է և հնարաւոր, և օգտակար: Անգլիական ժողովուրդը դործնական խելը վաղուց առակ է դարձել: Շատ հարցեր, որոնք սուր բնաւորութիւն են ընդունում Ռուսաստանի և Անգլիայի միջման ժամանակ, կարող են շուտ և խաղաղ լուծվել, երբ նրանք համաձայն կը գործեն:

Այդպիսի հարցերից մէկն է և հայոց հարցը: Մեր և արտասահմանի մամուլը բաւական յոճախ յիշեցնում է կառավարութիւններին ասիական թիւրքիայում ապրող հայ ցեղի թշուա զրութեան մասին: Տասն և վեց տարի է, որ թիւրքաց կառավարութիւնը չէ կատարում ինքնին դաշնագրի 61-ը յօդուածով իր յանձն առած պարտաւորութիւնները: Յարկված թիւրքիայի այդ զարմանալի արձանարանների պատճառը դէպի մի միջազգային դաշնագրի այն երեւնի ծածուկ, երբեմն յայտնի հակառակութիւնն է, որ գոյութիւն ունի Ռուսաստանի և Անգլիայի մէջ, որովհետեւ մնացած եւրոպական պետութիւնները շահեր չունեն հայոց հարցում: Երբ հայերը դիմում և հովանաւորութիւն են խնդրում անգլիական կառավարութիւնից, նա, այսինքն անգլիական կառավարութիւնը չէ ցանկանում կուսել թիւրքիայի հետ կամ Ռուսաստանի շահերին ծառայել, երբ թշուա ժողովուրդի արեւմտեանները ուղղվում են դէպի ուսաց

կառավարութիւնը, այդ վերջինը սառնութեան է հանդիպում բրիտանական կարբինտի կողմից: Այն ինչ ժամանակակից եւրոպական քաղաքականութեան արբնցիպներէց մէկն է պաշտպանել թէ առանձին անհատներ, և թէ ամբողջ ցեղերի վիճակը, բարորութիւնը, պատիւը և կենսքը: Ռուսաց և անգլիական կառավարութիւնների դուրեղ խօսքը վերջ կը դնէր այն բարարութեան վերջիններին, որոնք ամօթալի են դարձնում մեր ժամանակը, որոնք մի տխուր ստուեր են զգում եւրոպական դիպլոմատիայի վրա:

Վերջապետում է Ռ. Գրանը, խորհուրդ տալով նրան շուտով զսպել կիսավայրենի քիւրդերին, ապահովել հայ աղբարեակութիւնը թիւրքաց վարչութեան կամայականութիւնից, բռնութիւններից և քիւրդերի առաջակային յարձակումներից:

«Ռայց երկար և դառն փորձք ստում է, որ անհին է որ և է յայ դնել թիւրքաց կառավարութեան վրա, որ միայն մեր մասնացոյց արած համաձայնութիւնը Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի մէջ՝ հնարաւորութիւն կը տայ ազատ շունչ քաշել թշուա հայ ազգաբնակչութեանը: Այդ հետեւեալքին հասնելու եւրոպական պետութիւնների պատուի խնդիր է, մարդասիրութեան և արդարութեան պարտքն է: Դա, ի հարկէ, պատերազմ չի պահանջի: բաւական է, եթէ Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան պնդեն դրա վրա:»

«Русская Мысль»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԸՍՏՐ ԳՐԲՍ

Այսօրվայ հեռագիրը հարգուում է, որ արտաքին գործերի մինիստր, ստասս սեկրետար Նիկոլայ Կարլովիչ Գրբս վախճանվեց:

Նա ծնվել է 1820 թվ. մայիսի 9-ին, ուրբին 74 տարեկան էր: Իր ուսումը աւարտելով Յարսկոե-Ալեյի լիցեում, 1838 թվ. մտա ծառայութիւն արտաքին գործերի մինիստրութեան ասիական ղեկաւարութեանը: Ապա նա զանազան պաշտօններ վարեց ղեկաւարութիւնների և հիւպատոսարանի կրտսեր թարգման, 1850 թվ. կ. Պոլսի ղեկաւարութեան առաջին քարտուղար եղաւ, յաշորդ տարին նա արդէն Մոզաւայի հիւպատոսի պաշտօն ստացաւ. ապա դառաւ Նիկիտոսի ընդհանուր հիւպատոս, իսկ 1863 թվ. Գրբս նշա նակվեց Ռեհրանի ուսաց լիազոր ղեկաւար, և նոյն պաշտօնով տեղափոխվեց նախ Բերն և ապա Ստոկհոլմ:

1875 թ.ից Գրբս իր գործունէութիւնը տեղափոխեց Պետերբուրգ, ստասնայով արտաքին գործերի մինիստրի օգնականի և ասիական ղեկաւարութեան մինիստրի օգնական եղած ժամանակ Գրբս մեծ ազդեցութիւն ունէր մինիստրութեան գործերի և արտաքին քաղաքականութեան հարցերի ուղղու-

թեան վրա: 1876—78 թվականներին, հանդուգեալ Գորպակովի բացակայութեան ժամանակ, Գրբս կառավարեց մինիստրութիւնը, իսկ 1882 թվ. նա նշանակվեց արտաքին գործերի մինիստր, և այդ պաշտօնում մնաց մինչև իր կենսքի վերջին օրակն:

Այսօրվ ամենացածր պաշտօններից, Գրբս իր սովորն աշխատասիրութեամբ հասաւ մինիստրի բարձր պաշտօնին, և որպէս մինիստր նա յայտնի էր իբրև ջերմ կողմնակից խաղաղ քաղաքականութեան:

ՆԱՍԱԿ ՎԵՐԻՆ-ՍՊՈՒԽՍԻՑ

Գեկտեմբերի 24-ին

Ամբողջ երկու տարի է ինչ աւազակապետ Նարին Նախիջևանի և Չաղգեղ-րի գաւառները ստպաւակութեան աւազակ է դարձել: Այդ ժամանակակից ուս թալանել է ամբողջ զինուոր և անթիւ մարդկանց: Տեղական ժողովուրդը, սարսափի մէջ լինելով, կտրել էր իր յարաբերութիւնը հարեան զինուորի և զիւրաքաղաքների հետ, և այդ պատճառով մասնաւոր վաճառականները շատ վնաս էին կրում. իսկ ընդհանրապէս ազգաբնակչութիւնը տուժում է նրանով, որ կենսական միջոցները ստիպված է աւելի թանկ գնելու: Ընդ բերելու, քանի որ բերող չը կայ: Բացի դրանից ազգաբնակչութիւնը, իրան պաշտպանելու համար, մեծ ծախսերի տակ էլ է ընկել, շատացնելով պահպանների թիւը և այնու վերջին ժամանակներս կարծում էինք, թէ ազատվել ենք այդ աւազակի խնդրից, բայց լուր կայ, որ նա անցեալի դառն առ ոչինչ համարելով, պատրաստվում է մի յանդուգն և համարձակ քայլ անել, այն է՝ յարձակվել հարուստ Աղուխի վրա: Այդ մասին Օրդուբաթի պրիստաւը մի քանի օր առաջ յայտնեց մեր տանտէրին ի զգուշութիւն: Նոյն օրը ուղարկվեց զիւր պահպանները համար 7 կողակ, իսկ երեկոյեան եկան նոր պահպաններ: Սակայն երեք օրից յետոյ ինչ ինչ պատճառներով հեռացան: Ներկայումս մնացել են չորս ձիւաւորներ, որոնց շուտով պէտք է փոխարինեն կղզակները:

Թիւրքիայում տիրող կարգ ու կանոնների հետեւեալները այժմ են կամաց կամաց երեան դաւիսաւակում են և արտաքանում ընդի երկրից ոչ միայն հայերը, այլ և նոյն իսկ ասորիները: Մտտ օչերս Չուլֆից եկողները պատմում էին, որ մի ահալին խումբ ասորիներ, թվով 150—200 հոգի, միայն առանց ընտանիքների, անցել են մեր կողմերը ապաստան գտնելու: Ասում են, որ սրանից մի քանի ժամանակ առաջ, նոյն տեղով անցել են և հայեր իրանց ընտանիքներով: Նկողնները շատ վատ գոյներով են նկարագրում իբրի զրութիւնը շայտաստանում: Գրութիւնը անտանել է, ժողովուրդը, ասում են, ուստիու հաց չունի: Նրանք դիմում են Եջմիածին, յոյս ունենալով որ այնտեղ ապրուստ կը ստանան այս ձմեռ: Սակայն խնդրերը չը զիտեն, որ Եջմիածին թէ շտե-

Յանկարծ երիտասարդը մտաբերեց քերդերին և աչքերը բարձրացրեց. տեսաւ որ մտնում էին և մինչև իսկ որոշեց, որ երեք հոգի էին:

Նա շատ սով ըաց թռչեց դրից աղջկան:

— Գալիս են, ասաց, — գոնէ պաշտպանվելով մեռնենք: Եկտոյ առաւ հրացանը, մի վայրկեան մտածեց և երբ քերդերը կանգ առել հետքերն էին դնում, ուղղեց դէպի նրանց և դատարկեց:

Բոցը վիժեց փողից որպէս մի խուրձ շանթ, սլացաւ մթութեան մէջ, յետոյ լավեց մի սուրում և մի աղաղակ մի քերդը ընկել էր:

Իսկոյն երկու գնդակներ եկան դէպի նա. մէկը տախակացաւ ժայռի վրա, իսկ միւսը անցաւ դիւրի վրայից:

Գրանից յետոյ քերդերը մի քանի ոտտիւն գործեցին և մտան մի մեծ քարի ետեւ:

Կաննաւոր կուր էր սկսվում, մտած պատնէշների ետեւում, ոյծերը անհաւասար էին, բայց Պետրոսը մի գնդակ էլ ուղղեց դէպի քերդերի թագնված քարը:

Այսպէս մի քանի րօպէ գնդակներ սկսեցին տեղալ միմեանց վրա ընդհատ կերպով և Պետրոսը չէր նկատում, որ հակառակ կողմից արձակվող հրացանը մէկն էր, փոխանակ երկուսի: Նաղենիկը կծկվել էր ժայռի քամակում:

Այդպէս էր դրութիւնը, մի րօպէ լուծվին էր անկողն և Պետրոսը աչքը չէր հեռացնում դիմացի

ժայռից, երբ յանկարծ ետեւից պաշարվեց քերդերից մէկը դաղաղադողի անցել էր ետեւի կողմը, մտել մի քարի ետև և ասնտեղից էլ գնդակահարել սկսեց փոխտակակներին: Առաջին գնդակը ժայռից մի կտոր քար, Նաղենիկը ուղղեց գնաց:

Պետրոսը կատաղութեամբ մի ոտտում գործեց, դրան հետեւեցին երկու ուրիշ ձայներ, մի աղաղակ իր կողմից և նա տեսաւ թէ ինչպէս Նաղենիկը ձեռքերը դէպի նա պարզեց, յետոյ բարձրացաւ, ծնկան վրա ընկաւ և փուլեց ժայռի վրա:

Պետրոսի արեւը դէպի դուխը հոսեց, հակաթիւ թռիչքով հասաւ դէպի քերդը, հանեց երկար սուրը և մի այնպիսի հարված հասցրեց նրան, որ եթէ բերդը ետ չը թռչէր, անշուշտ զլիւնց դրկվելու էր:

— Անօրէն, ասաց Պետրոսը և էլ չը թողեց քերդին շարժվելու, գնդակները անցնում էին նրա կողմից, մէկն էլ ազդրի մէջ մտաւ, բայց նա հրացանի բռնով ջանջախեց քերդի դուխը, դաշնով պատտռեց նրա կողմը և ապա նոյն թռիչքով անցաւ այն տարածութիւնը, որ իրան ըստանում էր միւս քերդից և չը նայելով դէպի նա ուղղած գնդակները, հասաւ նրան:

Չեռքին միայն դատարկ հրացանը ունէր, բարձրացրեց և առանց խօսելու իջեցրեց քերդի գլխին: Սա վաճանը դէմ տուց և դաշնով յարձակվեց:

Պետրոսը գոտուց հանեց ատճմանակը: Մի երկու րօպէից յետոյ այդ քերդը էլ ոտքի տակն էր, բայցված կուրծքով:

Յաղութիւնը Պետրոսին էր, դաշուը ամայի մնաց: Մի խոր լուծիւն տիբեր նրա շուրջը:

Կանգ առաւ և շուրջը նայեց, արեւնով լցվել էին նրա աչքերը, խեղաբարի պէս էր, չը գիտէր ուր էր: Մթութիւնը հեղհեղաւ սաստկանում էր նրա շուրջը. հորիզոնը լիովին ծածկված էր ամպերով, կամաց-կամաց շրջակայ լեռների շրջադեմեր իսկ անհետանում էին:

Մենակ էր այժմ և հեռոջեւէ գիտակցութեան էր գալիս, հանգիստավում էր: Մի վայրկեան տեսեց, որից յետոյ նա յիշեց բոլորը:

Երբ յիշեց, մի խուլ, ցաւալից աղաղակ զուրս թաւաւ նրա կողմից, վաղեց դէպի ժայռը, ցած ձգեց հրացանը և շուրջը Նաղենիկի դիակի մօտ: Գեռ տաք էր. հողի բարբախում էր կուրծքը իր Նաղենիկին էր, դարսված, մահամեծ էր. ստակալի իրողութիւնը նրան երազ էր թվում:

— Նաղենիկ... գոռաց աղիողում ձայնով, — իմ Նաղենիկ...

Աղջիկը շարժվեց և բարձրացրեց թևերը. բացվեցին քիչ նրա աչքերը, մի ակնթարթ, յետոյ մի բուռ արեւի զուրս հոսեց նրա ընդին:

Պարտու գրկեց, բարձրացրեց նրան: Մի բառ անգամ չարտասանեց թշուա աղ-

ջիւր. թէքեց դուխը, դրեց իր սիրողի կրծքի վրա և մտաւ:

— Նաղենիկ... գոռաց երիտասարդը, Աստուած իմ, միթէ առանց քեզ եմ մնալու, միթէ ինձ թողնում ես...

Բայ թողեց նրան գրկիցը, բարձրացաւ, դէն շարտեց դիտարկը, բացեց կուրծքը: Խղիղում էր, չը գիտէր ինչ անել... մի օգնութիւն, մի ձայն գոնէ, միթէ չէր կարելի ազատել մտած աղջկան, չէ որ իր կենսքը կը տար նա դրա համար... Խոր լուծիւն էր տիրում ամեն կողմ միմին ամպերը կուտակվում էին միմեանց ետեւի երկնքի երեսին, մեղմ ցուրտ քամի էր սառնում — անցնում օդի միջից... Լուռ էր ամեն կողմ, ոչ մի շուկ, ոչ մի ձայն...

Մի մութ մշուշ սոյղ ժամանակ առաջանում շրջափակում էր հարթավայրը, որի միջից դեռ երևում էր կուրծքն ու գլուխը բաց, յուսահատ աչքերը դէս ու դէն պատցոնող երկարահասակ երիտասարդը, որ պարբերաբար, ժամանակ առ ժամանակ աղեկաս ձայնով օդն էր պատասում գոչելով:

— Նաղենիկ...

Ու նրա ձայնը տարածվում էր հեռուները, որպէս գիշերային թռչնի անբախեցնող ողբ... (Կը շարունակվի)



խացան, որ այնպիսի շատ են հայերը Այստեղի հայերի մի մասը, առանձնապես բնիկները միայն թիւրքերէն են խոսում և հայերէն չը գիտեն, բայց չնորհիւ հայոց զարթոյլի, երեսները սկսում են հայերէն սովորել ու քիչ թէ շատ տանն էլ հայերէն խօսել:

Բայց քանի որ ինքնակամ են զանազան ազգութիւնների՝ յոյներ, բուլղարներ, թիւրքեր, հայեր, մոլդովացիներ և այլն: Տիրապետող լինելու գրեթէ թիւրքերէնն է, քանի որ պատերազմից առաջ այս քաղաքը և ամբողջ Կոստանթնուպոլիսը քիչ թէ շատ տանն էլ հայերէն խօսել:

Պ. Գալտեան

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՈՒՌՍՏՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐՈՒՊՈՒԿ, 13 յունվարի: Անգրկապեան շրջանի զլխաւորը, զինարար Կոստանթնուպոլիսի Պետերոպոլիցի ճանապարհ ընկալ յանձնարարութիւն ունենալով յայտնել Շահին թագաւորի գահ բարձրանալու մասին:

ԱՌԷՆԻԲ, 13 յունվարի: Կազմակերպված է մինիստրութիւն Գեղիանիսի նախագահութեամբ: Զինարարական և ծովային մինիստրներ են նշանակված թագաւորի ազիտանտները:

ՊԱՐԻՉ, 13 յունվարի: Յոր ազաջարկեց մինիստրութեան կազմակերպութեամբ Վիբոնի:

ՊԵՏԵՐՈՒՊՈՒԿ, յունվարի 14-ին: Բարձրագոյն Ուկրաին: Եկայերական հողատիրեան մասին Մեր այն հաւատարիմ հպատակներէ համար, որոնք նուիրել են իրանց ընդունակութիւնները և քրտնաջան աշխատութիւնները Մեր և հայրենիքի ծառայութեանը՝ զիտուութեան, գրականութեան և պարբերական մամուլի ասպարիզում:

(Մենք արդարայի գտանք իւրաքանչիւր տարի տալ պետական դանձարանից զբաղական միջոցներ անհրաժեշտ օգնութիւն հասցնելու չքաւոր գիտնականներին, գրականաշէտներին և պարբերականներին, նոյնպէս և նրանց այրիներին և որբերին, զնեղով Մեր այս կամքի կատարումը Գիտութիւնների կայսերական Ակադեմիայի վրայ, որպէս առանցակարգ գիտնական դասակարգի վրա Ռուսաց կայսրութեան մէջ: Հաստատ յայտնելով, որ որպիսով մի այդպիսի նպատակ, անկախ նոյն նպատակով այժմ գոյութիւն ունեցող մասնաւոր հիմնարկութիւններէ միջոցներից օտարակց նպատակներից, հնարաւորութիւն կը տայ վերոյիշեալ անձանց աւելի էլ մեծ ետանդով նուիրել իրանց ոյժերը գիտութիւնների և հայրենի գրականութեան ծառայութեանը ի փառս և ի մեծութիւն Մեր ջերմ սիրամ Ռուսապետին: Այս նըպատակով Ամենաողորմած հրամայում ենք, 1) չքաւոր գիտնականներին, գրականաշէտներին և պարբերականներին, նոյնպէս և նրանց այրիներին միանուազ և զբաղական նպատակներ տալու համար, և դրանցից սնուցիլներին, որոնք թողւկներ չեն ստանում ուրիշ աղբիւրներից, նոյնպէս և կենսական թոյսկներ, տալ կրթաբանչիւր տարի պետական գրանձարանից 50 հազարական ռուբլի այն պայմանով, որպէս զի ներկալ տարին վերոյիշեալ գումարը տրվի այն կրթիտից, որ որոշված է նախաձեռնով աննախատեսանելի ծախսերի համար, իսկ հետեւեալ տարիները մոյնովի ժողովրդական լուստարութեան մինիստրութեան նախաձեռնի մէջ: 2) վերոյիշեալ նպատակները ստանալու համար վերոյիշեալ անձանց իրաւունքների քննութիւնը և որոշումը, այլ և այն գումարների կարգադրութիւնը, որ այդ նպատակով տրվում է պետական գրանձարանից, նոյնպէս և այն գումարները, որոնք կարող են որպէս մասնաւոր նուիրատուութիւններ ստացվել կայսերական Գիտութիւնների Ակադեմիայում, զնեղ Գիտութիւնների Ակադեմիայի վրա, տալով իրաւունք Ակադեմիայի նախագահին հրաւիրել, իր ընտրութեամբ, այդ հարցերը ճանաչու համար այնպիսի անձանց, որոնք կարող են այդ նպատակին օգտակար համարվել: 3) Թող տալ ժողովրդական լուստարութեան և ֆինանսների մինիստրներին, նոյնպէս և Գիտութիւնների Ակադեմիային փոխադարձ համաձայնութիւն կայացնելով մշակել և գործադրել ա) կանոններ, որոնցով Ակադեմիան պէտք է ղեկավարվի 2-դ կէտում մասնագոյց արված հարցերը լուծելու համար և բ) կանոնադրութիւն այդ հարցերը ընկնելու կարգի մասին:)

Երբին գործերի մինիստրը որոշեց զազարեցնել «Курский Листокры» լրագրի հրատարակութիւնը 2 ամսով:

Հրատարակված են ֆինանսների մինիստրութեան կարգադրութիւնները, որոնցով անանկ են յայտարարվում կրթիտիցիի առևտրական բանկը և Մոսկվայի երկրորդ փոխադարձ կրեդիտի ընկերութիւնը:

ՆՈՎՈՂՆԱՍՄ, 14 յունվարի: Եսպանացիները տիրեցին իւնդուանդին, յունվարի 8-ին: Չինացիները յունվարի 10-ին յաձեռնարկ գործեցին խանդ-Չէ-զի վրա, բայց յետ մղվեցին. կորցրին 100 հոգի սպանվածներ, եսպանացիները կողմից 20 հոգի են վերաւորված:

ԲԷՂԳՐՈՒԿ, 14 յունվարի: Թագաւորը ճանապարհ ընկաւ դէպի Պարիզ:

ՊԵՏԵՐՈՒՊՈՒԿ, 15 յունվարի: Երկէ երկուսան վախճանվեց թղթերի բարբոթումից արտաքին գործերի մինիստր Նիկոլայ Կարովիչ Գիրս: Ամբողջ մամուլը հիացմունքով է ողջունում իրան արված թագաւորական մեծ շնորհը, համարելով յունվարի 13-ը—բարձրագոյն Ուկրաին ստորագրելու օրը—իսկական փառուն տօն ժամանակակից մամուլի:

ՊԱՐԻՉ, 15 յունվարի: Մինիստրութիւնը կազմակերպված է. Ռիբո—մինիստրների խորհրդի նախագահ և ֆինանսների մինիստր, Տրալիե—արդարադատութեան մինիստր, Հանտո—արտաքին գործերի, Լյու—ներքին գործերի, Պ. Է. Կարել—ժողովրդական լուստարութեան, զննելով լինելու—զինարարական մինիստր, ժողովպետ վէնար—ծովային մինիստր, Կիւպիլի Կիւտեման—հասարակական աշխատանքների մինիստր, Լէբոն—առևտրի, Գառո երկրագործութեան, Ետան—կօշտիներին:

ՊԵՏԵՐՈՒՊՈՒԿ, 16 յունվարի: Արտաքին գործերի մինիստր օգնական գաղտնի խորհրդական Ն. Պ. Շիչինը նշանակված է արտաքին գործերի մինիստրութեան ժամանակաւոր կառավարիչ:

Ներքին գործերի մինիստրին ներկայացան այն պատգամաւորութիւնների անդամները, որոնք եկել են Պետերոպոլիցի շնորհակարարութիւններ մատուցանելու Նոյնա Մեծութիւնների պատկազարութեան առիթով: Ի. Ն. Կուրնովը ընդունեց իւրաքանչիւր պատգամաւորութեանը առանձին իր ընկալարանի ընդունարան դահլիճում: Լուր կայ, որ Պետերոպոլիցի կամ պատգամաւորութիւնները չորս խմբի կը բաժանվեն՝ նահանգական քաղաքների և ուրիշ տեղերի, զինարարական շրջանների, ալլազիներ և ֆինանսական-արդիւնաբերական: Առաջին խմբին կը ներկայացնի թագաւոր կայսրին ներքին գործերի մինիստրը, հետեւաներին, զինարարական մինիստրը և վերջինին—ֆինանսների մինիստրը: Պատգամաւորութիւնները զուրս կը գան Պետերոպոլիցի ոչ վաղ փետրվարի 2—3-ից:

ՍՕՖԻԱ, 16 յունվարի: Բոլղարիա զիտաւորութիւն ունի մաքսային պետերազմ յայտնել Աւստրո-Ունգարիային:

ԻՄՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՆՈՒՄ Է

ՊԵՏԱՍԻԿՈՐՍԿ, Լ. Ս. Գ. Արժուճուճ «Այստեղ և այնտեղ» գիրքը սպառված է, ուստի ձեռք ուղարկել չենք կարող:

ՆԱԼՁԻԿ, Ա. Ս. Չեր խնդրած գրքերը ուղարկեցինք: Երբեք գրքի փոխարէն ուղարկեցինք «Էլիէլինա», որովհետեւ խմբագրութեան մէջ ուրիշ գիրք չունենք:

ԳՐՈՉՆԻՑ, Արշակ Ա. ետիտեան. Չեր 1 ռուբլին յանձնեցինք՝ կենսորոնական գրալաճառանոցին գրքերի ցուցակի հետ:

ՊԵՏԱՍԻԿՈՐՍԿ, Ա. Մէլլե-Սարգսեան. Չեր խնդրած լուր գրքերը չը կան. շատերը սպառված են. ուղարկեցինք այն, ինչ որ ունենք. կարգադրեցէք, թէ ինչ անենք մնացած փոքր:

ՐՈՍՏՈՎ, Գր. էստատեան. Գրքերը ձեռք ուղարկեցինք:

ԽՈՐԱԳԻՐ՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻԿՈՎ-ԱՂԱՍՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մ Ի Տ Ի Կ Ի Ն

Թիֆլիսում, Պանասովիչի փողոցում կորցրել է մի քտակ, մէջը 75 ռուբլի 95 կօպէկը: Գա նրա վերջին փողն էր. Թիֆլիս եկել է բեշկիւլու համար, և կորցնելով այդ փողը, մնացել է առանց միջոցների: Ուստի խոստահարք խնդրում է զօտողից բարի լինել և փողը հասցնել Թիֆլիսի Պոլիցի-մէյստրին, որից և փողի աւելը կը ստանայ: Գտնողին կը տրվի վարձատրութիւն:

(№ 6) 1—2

ՓՈՐՁՎԱԾ ԵՒ ՀՄՈՒՏ ՎԱՃԱՌԱԿԱՆ

ՄՆԱՅԱԿԱՆ ՄԻՆՈՒՉ ՄԵԼԻԿՈՎՆՅՈՒ պատիւ ունի յայտնելու, որ Ալտաւիա կայարանում ընդունում է յանձնարարութիւն ամեն տեսակ աղբարներ ուղարկելու համար ըստ պատկանելոյն, համաձայն պատկանելի ուղարկողներին:

Հասցէն՝ Ակտաֆա, Мнэакаману Меликову. (№ 6) 1—8

ОТКРЫТА ПОДПИСКА НА ГРУЗИНСКУЮ ЕЖЕДНЕВНУЮ ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКУЮ ГАЗЕТУ

„ИВЕРІА“

НА 1895 ГОДЪ

Подписная цена газеты с доставкой и пересылкой:

Table with subscription rates for 12 and 6 months. Columns include duration (На 12 мѣсяцев, На 6 мѣсяцев), price in rubles/kopecks (10 p. — к., 6 p. — к.), and additional rates (На 5, 4, 3, 2, 1).

За границу на годъ 17 руб., на полгода—9 руб. 50 коп.

За перемѣну адресовъ уплачивается: иногороднаго на иногородный—40 коп., городского на иногородный—1 руб. Подписка принимается не иначе, какъ съ перваго числа каждаго мѣсяца.

Подписка и объявленія принимаются въ Тифлисѣ, въ помѣщеніи редакціи, Николаевская, 21.

Иногородные обращаются съ требованіями: Тифлисъ. Въ редакцію газеты «ИВЕРІА».

1—3 Редакторъ-издатель князь Ілья Чавчавадзе,

Նոյնմբերի 20-ից ստացվիլ է Պատեօրի սխաեմով պատրաստած ԲՐՈՒՍՅՅԻ ԲՈՒՌՈՒԹԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ, որ արդէն անցեալ տարիներէց յայտնի է կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով և տուած առատ բերքով: Սերմը ստացված է ուղղակի յայտնի «Էլիօսօփոս», Ֆիլմայից: Գնիլ ցանկացողները կարող են զիմել՝ ԲԱՌՈՒՄ, ԹԻՖԼԻՉ, ԲԱԳՈՒ, եղբ. Մնացականեաններին, իսկ ՆՈՒԻԻՒ Ազալ Մուսայ Մահմեդովին: Այս հասցէով. Բր. Мнацаканянцъ, Ватумъ къмъ Тифлисъ къмъ Ба... (№ 136) (շ. 6.) 12—25

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԻՐ-ՅԱԿՈՎ ԲԵԱՆՅԻ

Ընդունում է երթեկի, կրագրիչութիւնի և զիւրօթիւնի աշակերտներ, Պատրաստում է զիննազրայի, ընտրական ուսումնարանի, կալէաների կորպուտի և այլ ուսումնարանների համար: Սօրոակ, Գանձօվայայ փ. № 11. (№ 127) 4—10

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1881 Թ.

ՐՈՍՄՄԱ

Ազաճովազրական ընկերութեան մէջ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍԻ ԴԱՄԱԳԱՆՈՒՆԵՐ 20,500,000 ՐՈՒՐԼԻ

Ընկերութեան տոկոսներ թղթերը պահվում են պետական բանկում:

Օրին ահ: Ընտանիքի ճայր, 34 տարեկան, ապահովազրվում է 5,000 ռ., որ պէտք է արվի կնոջը և երկխաններին անյապաղ մահից յետոս: Այդպիսի ապահովազրութեան համար նս վճարում է երեքսնական պրէմիա 30 ռ. 80 ճպկկ:

Ապահովազրութիւնները ընդունվում են 1000-ից մինչև 100,000 ռ. գումարների մէջ անձի կեանքի համար:

Ընկերութիւնը ապահովազրում է առանձին շահաւէտ պայմաններով և արտօնութիւններով՝ հիւանդութեան և աշխատանքին անընդունակ լինելու դէպքում:

Ապահովազրական գումարը արվում է և մահվան դէպքում տարափոխիկ հիւանդութիւնից, խօլերայից և այլն:

Յունվարի 1-ին 1894 թ-ի «Բոսսիա» ընկերութեան մէջ ապահովազրված էին 28,246 անձինք 75,621,010 ռուբլի գրամազրվել:

Ապահովազրողները մասն ունեն ընկերութեան եկամտաներից: Ապահովազրողների ղեկիղէնաը 1893 թ-ի համար—12% է:

Ապահովազրութեան համար յայտարարութիւնները ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), ընկերութեան Թիֆլիսի բաժնում (Сергиевская, д. № 6) և ընկերութեան գործակալութիւնների մէջ կայսրութեան բոլոր քաղաքներում: (№ 85) 4—20

ԳԻՆԸ 20 ԿՕՊԵԿ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԻՒՐԿԱՅ ՀԱՅԵՐԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

ԳԻՆԸ 20 ԿՕՊԵԿ

Թիֆլիսում վաճառվում է «Մշակի» խմբագրատանը, նոյնպէս և Գլորցոլայայ փողոցի վրա հեռուէլ խմբութիւնում՝ Երբեմ ծատուրեանի լամպաների մագազինում և Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում: (№ 143)